



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-28-77

թիվ _____

« _____ » _____ 2019 թ.

Անգին Սահակյանին

/ք.Վանաձոր, Մոսկովյան 56-44/

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր դիմումում բարձրացված հարցի կապակցությամբ տեղեկացնում եմ, որ.

1. ՀՀ Լոռու մարզպետ նշանակվելուցս անմիջապես հետո «Լոռու առողջապահություն» հիմնադրամը եղել է իմ ուշադրության կենտրոնում: Կատարված ուսումնասիրության նյութերն ուղարկվել են ՀՀ դատախազություն՝ հիմնադրամի գործունեությունը և հիմնադրամին անդամակցության պարտադրողական լինելու հարցը քննելու նպատակով:

2. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կոլեկտիվի 2013թ. մարտի 12-ին կայացած ընդհանուր ժողովի օրակարգում քննարկվել է նոր ստեղծված «Լոռու առողջապահություն» հիմնադրամի կանոնադրությամբ ամրագրված դրույթներին ծանոթացումը:

Ժողովին մասնակից կոլեկտիվի անդամները ծանոթանալով «Լոռու առողջապահություն» հիմնադրամի կանոնադրությանը, հավանություն են տվել հիմնադրամի ստեղծմանը և առաքելությանը, ապա կամավոր սկզբունքով՝ ստորագրությամբ, համաձայնվել են (այդ թվում՝ նաև Դուք) անդամակցել հիմնադրամին՝ ստորագրելով կոլեկտիվի ընդհանուր ժողովի արձանագրությանը կից անվանական ցուցակում և առանձին անհատապես կազմված համաձայնագրում:

3. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի աշխատակիցների աշխատավարձից կոլեկտիվի կողմից որոշված և հիմնադրամի հաշվեհամարին փոխանցումները կատարվել են 2013թ. ապրիլից մինչև 2018թ. ապրիլը:

4. «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում երբևէ հիմնադրամներ չեն ստեղծվել:

 Invalid signature

X 

ԱՆՆԱԿՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ